ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ԱՐՇԱԿ ԳԷՈՐԳԻ ՄԱԴՈՅԵԱՆ

(1.07.1938–22.02.2021)

Կեանքի 82-րդ տարում ի Տէր ննջեց ակա-նաւոր հայագէտ եւ «Էջմիածին» ամսագրի բազմավաստակ խմբագիր Արշակ Գէորգի Մադոյեանը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Ծնուել է 1938 թ. յուլիսի 1-ին Ախալքալաքում: 1945–1953 թթ. ուսանել է ծննդավայրի՝ Յովհ. Թումանեանի անուան հայկական միջնակարգ դպրոցում, տեղափոխուելով Երեւան՝ 1956 թ. աւարտել է Ղազարոս Աղայեանի անուան միջնակարգ դպրոցը, 1961-ին՝ ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտը:

1972 թ. պաշտպանել է ատենախօսութիւն՝ «Առաքել Սիւնեցի. Բանաստեղծը» վերտառութեամբ, ստացել բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան, 1985-ին դոկտորի՝ «Միջնադարեան հայկական պօէմը» ուսումնասիրութեան հրապարակային պաշտպանութեան համար: 1996-ին նրան շնորհուել է պրոֆէսորի կոչում: Նոյն թուականից անդամակցել է Հայաստանի գրողների միութեանը:

1962–1966 թթ. աշխատել է ԵՊՀ հրատարակչութիւնում, 1966 թուականից՝ «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդէսի խմբագրական խորհրդում, 1972-ից նաեւ՝ ԵՊՀ հայագիտական հետազօտութիւնների գիտական կենտրոնում, որի վարիչն է եղել 1986–2006 թթ.: 2006–2009 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան

ինստիտուտում։ Հայ մատենագրութիւն է դասաւանդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում եւ Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում ու Ընծայարանում։ 2009–2015 թթ. «Էջմիածին» ամսագրի գլխաւոր խմբագիրն էր, համատեղութեամբ (1992–2009 թթ.) եղել է նաեւ «Բանբեր Երեւանի համալսարանի» հանդէսի գլխաւոր խմբագրի տեղակալ։

Հեղինակ է հայ հին եւ միջնադարեան գրականութեան ու մշակոյթի պատմութեանը նուիրուած հինգ հարիւրից աւելի յօդուածների ու հրապարակումների, գրքերի ու մենագրութիւնների

2008 թուականին ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պարգեւատրուել է Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ–Ս. Մեսրոպ» շքանշանով։